Առողջության ապահովագրություն

1 մայիսի 2024թ

Ներկայացվում է
«Աղոբ Դիվելոփմենթ Արմ» ՍՊԸ
անձնակազմին

+374 10 700 800
info@efes.am

Adobe

efes
INSURANCE

Հարգելի հաճախորդ,

Ուրախ ենք տեղեկացնել, որ ս. թ. մայիսի 1-ից «Ադոբ Դիվելոփմենթ Արմ» ՍՊԸ աշխատակիցների առողջության ապահովագրողը «ԷՖԵՍ» ապահովագրական ընկերությունն է:

Մեր ընկերության լոգոն է՝

efes
INSURANCE

Ստորև կարող եք տեսնել հեռախոսահամարները, հայտերի ներկայացման առցանց հարթակի հղումը և էլեկտրոնային փոստի հասցեն՝

(010) 700 800

+ 374 77 59 21 24

առցանց հարթակ

health.claims@efes.am

Դիմեք մեզ և մենք կհոգանք Ձեր առողջության մասին:

efes
INSURANCE

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹ

ՏԱՐԵԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԲՈՒԺՁՆՆՈՒՄ

Լաբորատոր հետազոտություններ

- ✓ Արյան ընդհանուր քննություն լեյկոբանաձևով
- ✓ Մեզի ընդհանուր քննություն
- ✓ Շաքարի որոշումն արյան մեջ
- ✓ Լիպիդային պրոֆիլ
- ✓ PAP քսուք / PSA
- ✓ Վիտամին D հետազոտություն

Խորհրդատվություններ

- ✓ Թերապևտ (մանկաբույժ)
- ✓ Ակնաբույժ (ներառյալ տեսողության սրության որոշում)
- ✓ Ստոմատոլոգ
- ✓ Գինեկոլոգ/ուրոլոգ

Գործիքային հետազոտություններ

- ✓ Էլեկտրասրտագրություն
- ✓ Որովայնի խոռոչի և փոքր կոնքի օրգանների ուլտրաձայնային հետազոտություն
- ✓ Կրծքագեղձի և վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտություն
- ✓ Մամոգրաֆիա 40 տարեկանից բարձր կանանց համար

Բուժկենտրոններ

- ✓ «Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոն
- ✓ «Մեդլայն» բժշկական կենտրոն
- ✓ «Էլիտ-Մեդ» բժշկական կենտրոն
- ✓ «Շենգավիթ» բժշկական կենտրոն

Ամբուլատոր բուժօգնություն

- ✓ Լաբորատոր-գործիքային և ախտորոշիչ հետազոտություններ
- ✓ Թերապևտիկ և վիրաբուժական միջամտություններ
- ✓ Ինֆեկցիոն հիվանդությունների բուժում,
- ✓ Այրվածքների, ցրտահարությունների, էլեկտրահարությունների բուժում,
- ✓ Սեռական օրգանների սնկային ախտահարման՝ կանդիդոզի հետազոտություն և բուժում, երբ վերջինս չի ուղեկցվում այլ առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով,
- ✓ Նախատեսված ստանդարտ պատվաստումներ, ինչպես նաև ՀՀ գլխավոր սանիտարական բժշկի կողմից էպիդեմիոլոգիական ցուցումներով առաջարկվող պատվաստումներ, այն դեպքերում երբ պատվաստումները չեն իրականացվում պետական պատվերի շրջանակներում,Ամբուլատոր դեղորայք, բժշկական պարագաներ,
- ✓ Մաշկի, լորձաթաղանթների գոյացություններ՝ խալեր, պոլիպներ, պապիլոմաներ և այլն,
- ✓ Մաշկի, եղունգների, փափուկ հյուսվածքների սնկային ախտահարումներ,
- ✓ Հարբժշկական պարագաներ՝ անշարժացնող միջոցներ, ճողվածքի պլաստիկայի ցանց, էլաստիկ գուլպաներ, մանկական ինհալյացիայի աէրոչեմբերներ և այլն՝ մինչև 100,000 ՀՀ դրամ (ներհիվանդանոցային և/կամ արտահիվանդանոցային պայմաններում նշանակված),
- ✓ Ապահովագրության պայմանագրով նախատեսվում է չհատուցվող հիվանդությունների և իրավիճակների ախտորոշման համար իրականացված ՄՌՏ կամ համակարգչային տոմոգրաֆիայի հետազոտության ծախսի հատուցում Պայմանագրի գործողության ընթացքում ընդամենը 2 դեպք բոլոր ապահովագրված անձանց համար,
- ✓ ՊՇՌ մեթոդով իրականացված COVID-19 դրական թեստի կամ ՀՏ հետազոտությամբ հաստատված COVID-19-ին բնորոշ թոքաբորբի դեպքում արտահիվանդանոցային (ամբուլատոր) պայմաններում իրականացված Covid-19-ի հետևյալ բժշկական ծախսերի հատուցում ոչ ավելի քան 100,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր դեպքի համար բժշկի կողմից ցուցված դեղորայք, հետազոտություններ և ՊՇՌ թեստ: Դրական ՊՇՌ թեստի դեպքում բժշկի ցուցումը պարտադիր չէ:

Ստացիոնար բուժօգնություն

- ✓ Լաբորատոր-գործիքային և ախտորոշիչ հետազոտություններ
- ✓ Անհետաձգելի թերապևտիկ կամ վիրաբուժական հիվանդությունների ոչ վիրահատական բուժում հիվանդանոցային պայմաններում,
- ✓ Ինֆեկցիոն հիվանդությունների բուժում,
- ✓ Ինտենսիվ թերապիա և ռեանիմացիոն միջոցառումներ,
- ✓ Սուր թունավորումների բուժում,
- ✓ Վնասվածքների վիրահատությունների ժամանակ կիրառվող մետաղական կոնստրուկցիաներ,
- ✓ Ստացիոնար պայմաններում նշանակված դեղամիջոցների արժեքի հատուցում,
- ✓ Բժշկական պարագաներ
- ✓ Մինչև 18 տարեկան երեխաների համար պետական պատվերի ծրագրում ընդգրկված հիվանդությունների և իրավիճակների բուժում ստացիոնար պայմաններում, եթե ծառայությունը մատուցվել է վճարովի հիմունքներով,
- ✓ Քթի միջնապատի դեֆորմացիայի, քթային անցուղիների, հարքթային խոռոչների վիրահատական բուժում մինչև 200,000 ՀՀ դրամ փոխհատուցման սահմանաչափով (արժեքի մեջ ներառվում են նաև բոլոր նախավիրահատական լաբորատոր և գործիքային հետազոտությունների արժեքները),
- ✓ Հիվանդասենյակի արժեքի հատուցում՝ մինչև 20,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր օրվա համար,
- ✓ Պայմանագրի շրջանակներում հատուցման ենթակա հիվանդության վիրահատությունից առաջ իրականացվող նախավիրահատական հետազոտություններ:

ՇՏԱՊ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- ✓ Շտապ բուժօգնության բոլոր տեսակներ
- ✓ Շտապ բժշկական տեղափոխություններ ՀՀ տարածքում՝ մասնագիտացված մեքենաներով և մասնագիտացված բուժանձնակազմի ուղեկցությամբ (բացառապես ցամաքային փոխադրամիջոցներով)
- ✓ **24/7** հեռախոսային խորհրդատվություններ ապահովագրական ընկերության բժիշկ մասնագետների կողմից

- ✓ **1-03 – Շտապօգնության ծառայություն**
- ✓ **8303 - «Աստղիկ ԲԿ»**
- ✓ **8119 - «Էրեբունի ԲԿ»**
- ✓ **8103 - «Արմենիա» Հանրապետական ԲԿ**

ՈՂՆԱՇԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- ✓ Ողնաշարի դեգեներատիվ դիստրոֆիկ ախտահարումների արտահայտված նյարդաբանական ախտանիշներ ունեցող սրացումների դեղորայքային բուժում,
- ✓ Ողնաշարի դեգեներատիվ դիստրոֆիկ ախտահարումների դեղորայքային՝ բուժմանը հաջորդող ֆիզիոթերապևտիկ միջոցառումներ՝ հարվածալիքային թերապիա, կինեզոթերապիա, բուժական մերսում, էլեկտրոֆորեզ, ֆոնոֆորեզ, ամպլիպուլս թերապիա, գերձայնային հաճախականության ալիքներով թերապիա, ուլտրամանուշակագույն ճառագայթում՝ Պայմանագրի գործողության ընթացքում համախառն 2 կուրս, յուրաքանչյուրը՝ 10 սեանս,
- ✓ Ողնաշարի դեգեներատիվ դիստրոֆիկ ախտահարումների ախտորոշում՝ ներառյալ ՄՌՇ հետազոտություն պայմանագրում նշված ցուցումներից առկայության դեպքում
- ✓ Ողնաշարի ճողվածքի վիրահատական բուժում:

ՖԻԶԻՈԹԵՐԱՊԻԱ

- ✓ Հարվածալիքային թերապիա, կինեզոթերապիա, բուժական մերսում, էլեկտրոֆորեզ, ֆոնոֆորեզ, ամպլիպուլս թերապիա, գերձայնային հաճախականության ալիքներով թերապիա, ուլտրամանուշակագույն ճառագայթում՝ Պայմանագրի գործողության ընթացքում համախառն 2 կուրս, յուրաքանչյուրը՝ 10 սեանս,
- ✓ Վնասվածքին հաջորդող ֆիզիոթերապևտիկ և վերականգնողական բուժում:

ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

- ✓ Ակնաբուժական հիվանդությունների վիրահատական բուժում (ներառյալ տեսողության սրության վիրաբուժական միջամտությունը՝ 50% հատուցմամբ),
- ✓ Ակնաբուժական հիվանդությունների թերապևտիկ կամ վիրաբուժական հիվանդությունների ոչ վիրահատական բուժում,
- ✓ Օպտիկական ակնոցի և/կամ օպտիկական կոնտակտային լինզաների ձեռքբերման ծախսերի հատուցում տարեկան 30,000 ՀՀ դրամ:

ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱ

Յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար հատուցվում է՝

- Թերապևտիկ բուժման ցանկացած **4 ատամի** ծախս,
- Վիրաբուժական բուժման ցանկացած ատամի ծախս (առանց ատամների քանակի սահմանափակման),
- Ատամնանստվածքների հեռացում, փայլեցում մեկ անգամ
- Ատամնաբուժական օրթոպեդիա

Հատուցման ենթակա չէ՝

- ինտակտ ատամների անատոմիական առանձնահատկությունների գեղարվեստական վերականգնումը,
- ատամների ճերմակեցումը և այլ կոսմետիկ միջամտությունները,
- լնդերի բուժումը,
- ատամնաբուժական օրթոդոնտիան, իմպլանտացիան

ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐ

Ծառայություն	Հատուցման սահմանաչափ
✓ Խորհրդատվություն	AMD 5,000
✓ Ռենտգեն և ախտորոշման այլ տեսակներ, եթե դեպքը հատուցելի է	Հատուցվում է
Թերապիա և Էնդոդոնտիա	
✓ Ատամի պսակի վերականգնում և Էնդոդոնտիա	AMD 20,000
Պերիոդոնտիտի բուժում և կանխարգելում	
✓ ատամնանստվածքների հեռացում, փայլեցում (այդ թվում Air-Flow) տարեկան ոչ ավելի քան երկու անգամ)	AMD 20,000
✓ պարադոնտիկ բուժում (լնդերի հիվանդություն)	AMD 22,600
Վիրաբուժություն	
✓ ատամի պարզ հեռացում ✓ ատամի բարդ հեռացում ✓ իմաստության ատամի հեռացում ✓ ռետենցված ատամի հեռացում ✓ ապէքսեկտոմիա ✓ թարախակույտի բացահատում	Հատուցվում է
Ստոմատոլոգիական օրթոպեդիա (սահմանաչափի մեջ ներառված չէ օրթոպեդիկ պրոթեզավորմանը նախորդող նույն ատամների թերապևտիկ կամ վիարաբուժական բուժման ծախսերը): Ստոմատոլոգիական օրթոպեդիան հատուցվում է նաև իմպլանտոլոգիայի շրջանակներում (իմպլանտեների արժեքը ենթակա չէ հատուցման):	AMD 80,000

ՀՂԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾՆՆԴՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- ✓ Պետական պատվերի շրջանակներից դուրս բնականոն, ախտաբանական հղիության վարման ծախսերի հատուցում (ստացիոնար և/կամ ամբուլատոր դեպքերում)՝ մինչև 100,000 ՀՀ դրամ,
- ✓ Պետական պատվերի շրջանակներից դուրս ծննդալուծման ծախսերի հատուցում մինչև 130,000 ՀՀ դրամ հատուցման սահմանաչափով, կեսարյան հատման ծախսերի հատուցում՝ մինչև 200,000 ՀՀ դրամ հատուցման սահմանաչափով,

Մինչ ապահովագրվելը առկա հղիության և հետագա ծննդօգնության ծախսերը ենթակա են հատուցման:



ՕՆԿՈԼՈԳԻԱ

- ✓ Չարորակ նորագոյացությունների վիրաբուժություն,
- ✓ Չարորակ նորագոյացությունների ոչ վիրաբուժական բուժում՝ քիմիոթերապիա, ճառագայթային բուժում՝ մինչև 500,000 ՀՀ դրամ,
- ✓ 2-րդ կետով սահմանված չափով հատուցման ենթակա է նաև ՀՀ տարածքից դուրս բուժումը ապահովագրված անձի ցանկությամբ:

ՆԵՅՐՈՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

- ✓Նեյրովիրաբուժական վիրահատություններ (բաց եղանակով)
- ✓Նեյրովիրաբուժական վիրահատություններ՝ փակ ներանոթային եղանակով

ՍՐՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- ✓ Սրտանոթային վիրաբուժություն (բաց եղանակով)
- ✓ Սրտանոթային վիրաբուժություն (փակ՝ ներանոթային եղանակով)
- ✓ Անգիոպլաստիկա դեղապատ բալոնով,
- ✓ Առրտայի պրոթեզավորում (հատուցվում են բացառապես առրտայի անևրիզմայի շերտազատման անհետաձգելի վիրահատությունները)
- ✓ Առրտայի պրոթեզավորում (քրոնիկ պլանային դեպքերում՝ առրտայի անևրիզմա),
- ✓ Սրտի փականների պլաստիկա և պրոթեզավորում



ՔՐՈՆԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Քրոնիկ հիվանդությունների սրացումների բուժում,
- Վիրահատական միջամտություններ, որոնք հանգեցնում են հիվանդության կամ վիճակի լիարժեք ապաքինմանը (պլանային վիրահատություններ):
- Ծրագրի «Ընդհանուր Բացառություններ» կետում չնշված քրոնիկ հիվանդությունների դինամիկ հսկողություն և պահպանողական բուժում (խորհրդատվություններ, հետազոտություններ և դեղորայք) մինչև 100,000 ՀՀ դրամ (այդ թվում՝ շաքարային դիաբետը և օնկոլոգիական հիվանդությունները):

ԱՎԱՆԴԱԿԱՆ (ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ) ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Այն դեպքերում, երբ գիտական բժշկությունը որևէ հիմնավորված պատճառով չի կարող կիրառվել, սույն Պայմանագրով նախատեսվում է ողջամիտ և սահմանված վճարների հատուցում հետևյալ բժշկական ծառայությունների համար՝

✓ ասեղնաբուժություն,

✓ արոմաթերապիա:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ԲՈՒԺՈՒՄ

ՀՀ տարածքից դուրս Ապահովագրված անձի բուժումը հատուցվում է այն հիվանդությունների դեպքում, որոնց ախտորոշումը դրվել է ՀՀ-ում և բուժումը հնարավոր է իրականացնել ՀՀ-ում: Հիվանդությունների բուժման ծախսը ենթակա է հատուցման ՀՀ-ում տվյալ հիվանդության բուժման համար գործող ողջամիտ գների սահմաններում:

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

Նյարդային համակարգի օբյեկտիվ ախտանիշներ չունեցող խանգարումներ, հոգեկան ոլորտի շեղումներ, սահմանային վիճակներ՝ նևրոզներ, կպչուն վիճակներ և այլն, այդ թվում՝ հոգեբանի, հոգեթերապևտի և հոգեբույժի խորհրդատվություն, վերջինիս կողմից նշանակված հետազոտություններ և դեղորայք մինչև 200,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր անձի համար:

ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- ✓ Առողջության ապահովագրության պայմանագրի շրջանակներում Ապահովագրված անձանց տրամադրվում է նաև ճամփորդության ապահովագրություն **15% զեղչ:**

Ճամփորդության ապահովագրության պայմանագիրը կարող եք ձեռք բերել առցանց՝ անցնելով հետևյալ հղումով՝ https://online.efes.am/create-contract/travel/signer: «Գնի հաշվարկ» էջում պահանջվում է լրացնել promo կոդ՝ պայմանագիրը զեղչով կնքելու համար: Promo կոդը վավեր է **մինչև 30. 04. 2025թ.** կնքվող բոլոր պայմանագրերի համար: Ձեր promo կոդն է՝ **CMXXXXXX**:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ,
- ✓ բնածին արատներ, զարգացման անատոմիական առանձնահատկություններ (բացառությամբ՝ քթի միջնապատի դեֆորմացիայի, քթային անցուղիների, հարքթային խոռոչների վիրահատական դեպքերի), ժառանգական հիվանդություններ,
- ✓ շաքարային դիաբետ (I, II տիպ), դրանց բարդությունները,
- ✓ ՄԻԱՎ վարակ, հեպատիտ B, C, D, E, F, դրանց հետևանքները, բարդությունները, լյարդի ցիրոզ,
- ✓ անպտղություն (առաջնային, երկրորդային), սեռական դիսֆունկցիա, հակաբեղմնավորման մեթոդներ, արհեստական բեղմնավորում, հղիության արհեստական ընդհատում (բացառությամբ բժշկական ցուցումներով հղիության արհեստական ընդհատման դեպքերի), սեռական հորմոնային դիսֆունկցիաներ (դիսմենորեա, հորմոնալ ոլորտի այլ շեղումներ), վերարտադրողական ոլորտի
- ✓ Բուժական սնունդ, սննդային կենսաբանական ակտիվ հավելումներ (վիտամիններ և այլն), խնամքի պարագաներ, հանքային ջրեր, ՀՀ ԱՆ դեղագործական տեսչության կողմից չգրանցված դեղամիջոցներ, խնամքի միջոցներ, բուժական կոսմետիկա,
- ✓ Կոսմետիկ վիրաբուժություն, կոսմետոլոգիական ծառայություններ, պլաստիկ, վերականգնողական վիրաբուժություն: Բացառությամբ այն դեպքերի, երբ նման բուժումը, վիրահատությունը պահանջվում է ապահովագրության գործողության ժամկետում տեղի ունեցած վնասվածքի արդյունքում:

Բացառությունների ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ բրոշյուրում:

efes INSURANCE

ՀԱՅՏԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՀԱՅՏԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Սիրելի՛ հաճախորդ,

Շնորհակալ ենք Ձեր առողջության ապահովագրությունը մեզ վստահելու համար: Այս ուղեցույցում կարող եք ծանոթանալ Ձեզ կցագրված բժիշկներին, Ձեր պայմանագրից օգտվելու կարգին և առանձնահատկություններին: Տեղեկացնում ենք, որ այսուհետ Ձեզ սպասարկելու են Ձեր անհատական բժիշկները՝ 1 ավագ 2 բժիշկներ: Ստորև ծանոթացե՛ք Ձեր թիմին, Ձեր պայմանագրից օգտվելու կարգին և առանձնահատկություններին:

Ավագ բժիշկ՝
Անի Հովհաննիսյան

Բժիշկ՝
Ժենյա Ասկանազյան



Բժիշկ՝
Գեղեցիկ Պարոնյան

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵԼ ՁԵՐ ԹԻՄԻ ՀԵՏ

Բժիշկների հետ կարող եք կապ հաստատել երկուշաբթիից ուրբաթ ժամը 09:00-20:00, շաբաթ օրերին՝ 09:00-18:00, ստորև նշված հեռախոսահամարներով՝

+ 374 77 59 21 24 զանգը կմիանա Ձեր թիմի բժշիկներին

+374 10 700 800 կամ հավաքել բժշկի ներքին համարը

Ավագ բժիշկ՝ Անի Հովհաննիսյան (7603)
Բժիշկ՝ Ժենյա Ասկանազյան (7602)
Բժիշկ՝ Գեղեցիկ Պարոնյան (7601)

Ոչ աշխատանքային ժամերին շտապ բժշկական հարցերի դեպքում կարող եք զանգահարել նույն հեռախոսահամարներով, զանգերի կենտրոնի աշխատակիցը կմիացնի Ձեր բժշկական թիմին

Ձեր հարցը տեքստային հաղորդագրության միջոցով ուղղեք բժշկի

+374 41 90 02 73

բջջային հավելվածների միջոցով մեր բժշկական թիմը կպատասխանի հաշված րոպեների ընթացքում

ԶԱՆԳԱՀԱՐԵԼՈՎ ՁԵՐ ԲԺՇԿԻՆ՝ ԴՈՒՔ ՍՏԱՆՈՒՄ ԵՔ

- Ձեր բժշկական հարցերի լուծումը
- Բժշկական մասնագիտական խորհրդատվություն առցանց տարբերակով
- Նշանակված դեղորայքի առաքման կազմակերպում առավելագույնը 4 ժամում
- Աջակցություն նեղ մասնագետի ընտրության, բուժ. կենտրոնի և պայմանավորվածության ձեռք բերման հարցում
- Աջակցություն թղթերի ներկայացման և հավաքագրման հարցում
- Անհատականացված բուժման պլանի կազմում

Ի՞նչ անել պատահարի դեպքում

Տարբերակ 1

Գանգատ ունենալու դեպքում կապ հաստատեք Ձեր բժշկական թիմի հետ: Մեր մասնագետները կօգնեն Ձեզ բուժկենտրոնի ընտրության, ժամերի գրանցման և կազմակերպչական բոլոր հարցերում , և մեր գործընկեր բուժկենտրոն այցելելու դեպքում ստիպված չեք լինի Ձեր գրպանից որևէ վճարում կատարել:



*Ձեր բժիշկների հետ կարող եք անցնել այս բոլոր քայլերը նա ոչ ապահովագրական դեպքերի ժամանակ

Տարբերակ 2

Եթե չեք օգտվել տարբերակ 1-ում ներկայացված խորհուրդներից, և ինքնուրույն եք կատարել ծախսը, կամ Ձեր նախընտրած բժշկական կենտրոնը առկա չէ մեր գործընկերների ցանկում, ապա

Հավաքեք այցի հետ կապված բոլոր համապատասխան փաստաթղթերը*

- Բժշկական տեղեկանք, որտեղ առկա կլինեն Ձեր գանգատները, ախտորոշումը և նշանակումները: Համոզվեք, որ այն կնքված և ստորագրված է
- ՀԴՄ կտրոն բացվածքով կամ հաշիվ ապրանքագիր կամ ԴՄ անդորրագիր
- Եթե կան կատարված հետազոտություններ, նաև դրանց պատասխանը

*Այս փաստաթղթեր առկայությունը պարտադիր են Ձեր փոխհատուցման գործընթացի համար

ՔԱՅԼ 02
Ուղարկե՛ք հատուցման հայտ օնլայն հարթակի միջոցով

healthclaims@efes.am

Հատուցման մասին որոշումը կայացվում է առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում:



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

efes
INSURANCE